

Մարտիրոս կ'ունենայ չորս զաւակ, երկու մանչ՝ Յովհաննէս եւ Սիմէոն, եւ երկու աղջիկ՝ Ճուհար եւ Հռիփսիմէ<sup>2</sup>: Տիկին Դովաթ († իբր 1586) եւ անոր զաւակը՝ Յովհաննէս († 1608էն յառաջ) վաղամեռիկ կ'ըլլան: Մահտեսի Մարտիրոս կ'երեւայ թէ մեռած է 1605ի մօտերը: Իսկ զուստըր՝ Ճուհար կը վախճանի 1612ին:

Սիմէոնի ծնունդը կ'իյնայ 1584ին. նա ինք զինքը 1608ին 24 տարեկան հասակի մէջ զիտէ: Երբ վախճանեցաւ մայրը՝ տակաւին տխեղծ տարիքի մէջ էր Սիմէոն. իւր մեծ քոյրը՝ Ճուհար մօրը փոխանակ կ'ըլլայ իրեն եւ կը հասցնէ զինքը ողջանդամ հասուն հասակին: 1612ին, երբ Վենետիկ կը գտնուէր Սիմէոն, կ'ընդունի Վանեցի վաճառականէ մը բօթարեր լուրը, թէ վախճանած է մեծ քոյրը. այս առթիւ կ'արձանագրէ Սիմէոն իւր Ուղեգրութեան մէջ ողբախառն տողերս. «ով բարերար իմ, ով երախտաւոր իմ, ով սիրեցեալը իմ, ով աշխատաւոր իմ, ով քոյր իմ եւ մայր, քանզի զմայր սակաւ գիտացի» (Ուղ. 179):

Թէպէտ աղքատ էին Սիմէոնի ծնողք

<sup>2</sup> Իւր մէկ յիշատակարանին մէջ 1609ին ողորմիս կը խնդրէ Սիմէոն իւրայիններուն համար՝ «ծնողաց իմոց ննջեցելոց մահղեսի Մարտիրոսին եւ մօրս Դովաթ խաթունին եւ եղբօրս Յովհաննիսի, եւ քեզս քր եմ ի մարմնի՝ Ճուհարին եւ Հռիփսիմէի եւ ամենայն ազգատուհար» (էջ 390): Իսկ 1619ին կը յայտնէ թէ «ունէի երկու քոյր եւ քրորդիք եւ այլ յուսով ազգականք (Ուղ. էջ 349. հմմտ. նաեւ էջ 96):